

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզում է Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը Ֆրանսիայից վերադառնում է Մայր Աթոռ:

* * *

Սեպտեմբերի 6-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

* * *

Սեպտեմբերի 10-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ, Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը:

* * *

Սեպտեմբերի 11-ին, կիրակի.—Խաչվերաց:

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, Ավագ խորանի վրա հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսում՝ «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեր՝ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 17) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը, երեկոյան, կատարվում է «Թափօր Խաչվերացի» ավանդական հանդիսությունը՝ նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի:

* * *

Սեպտեմբերի 12-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քին. Բաղրամյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում ժողով՝ նվիրված խաղաղության պաշտպանությանը:

Սույն ժողովին ներկա էին Մայր Աթոռի ներքին թեմերի հոգևորական և աշխարհական պատգամավորները՝ գլխավորությամբ թեմական առաջնորդների, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և աշխատավորությունը:

Ժողովի բացումը կատարեց Տ. Ներսես եպս. Պոլատյանը՝ անդրադառնալով աշխարհի ներկա անհանգիստ վիճակին:

Այնուհետև խաղաղության պաշտպանությանը նվիրված ընդարձակ ճառով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը, որն իր խոսքի մեջ հատկապես ընդգծեց աշխարհի բոլոր ժողովուրդների պայքարի անհրաժեշտությունը՝ կայուն և տևական խաղաղության պահպանության համար:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» (Ղուկ. Ա 35) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 24-ին, շաբաթ.—Սրբոցն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին:

Այսօր Երևանի Ս. Գևորգ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում «Ով սուրբ Գէորգ, պարծանք ազգի մարդկան. հրաշալի ճգնութեամբ ի յերկրի նահատակեալ և յերկինս պսակեալ ընդ անմարմնոցն դասս» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էին Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորք արքեպ. Գալուստյանը և Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերից մի խումբ բարձրաստիճան հոգևորականներ:

*
* *

Հոկտեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորք արքեպ. Գալուստյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից ու ոգեշունչ քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 3-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ճեմարանի սաների հետ հանդիպում է ունենում Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորք արքեպ. Գալուստյանը:

*
* *

Հոկտեմբերի 4-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ճեմարանի սաների համար «Հայոց Երուսաղեմ» թեմայով վեկուցում է Երուսաղեմի հայոց միաբանության անդամ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանը:

Բանախոսության ընթացքում ցուցադրվում էին Սուրբ Քաղաքի վանական տեսարժան վայրերին և Երուսաղեմի հայոց վանքում գտնվող եկեղեցական արվեստի նմուշներին վերաբերող գունավոր պատկերներ:

*
* *

Հոկտեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ Աստուած ասաց. Եղիցի լոյս եւ եղև լոյս» (Ծնունդք Ա 4) բնաբանով:

* * *

Հոկտեմբերի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում մեռուսօրհնության խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 16-ին, կիրակի.—Այսօր ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը այցելում է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցի: Եկեղեցու դռան առջև սրբազան հորը մատուցվում են թարմ մեխակներ: Ապա նա առաջնորդվում է եկեղեցի՝ մասնակցելու սուրբ պատարագի արարողությանը: Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Վաղարշակ ավագ քհն. Բաղումյանը:

Սուրբ Ավետարանի ընթերցումից առաջ ողջույնի և բարիգալստյան խոսք է ասում եկեղեցու վանահայր Տ. Հովսեփ քհն. Հակոբյանը:

Այնուհետև սրբազան հայրը իր օրհնության խոսքն է ուղղում ներկա բազում հավատացյալներին՝ իր ուրախությունը հայտնելով Սուրբ Աստվածածին եկեղեցու վերակառուցման առթիվ և մաղթելով, որ Աստված բազում երկար տարիներ պարգևի Ամենայն Հայոց Հայրապետին:

Մեկժամյա այցելությունից հետո Տ. Թորգոմ սրբազանը հրաժեշտ է տալիս եկեղեցու հավատացյալներին և վանահոր ուղեկցությամբ մեկնում Մայր Աթոռ:

* * *

Հոկտեմբերի 17-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետին են այցելում Իրաքի հայոց թեմի եկեղեցական վարչության անդամներ պրն. պրն. Հասրաթ Միքայելյանը, Գառնիկ Շահինյանը, Հայկ Պոսթանյանը, Տիրան Օհանյանը և Վահագն Մեսրոպյանը:

Վեհափառ Հայրապետի և հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

* * *

Հոկտեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հարավային Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէր, Տէր, վի սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի» (Սաղմոս Ը 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: